

Ա.Ս. ՊՈՒՏԵՎԻՆ


ԲԱՆԱՍՏԵՂՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ




ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1949

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕЕ
указанного здесь срока

Колич. пред. выдач _____





Ա.Ս. ՊՈՒՏԿԻՆ

891.71

Դ-90

Հայաստանի Հանրապետության 1961 թ.

ԲԱՆԱԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ



14.423

A 1
3517

ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 1949



А. С. ПУШКИН
СТИХОТВОРЕНИЯ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949 г.



ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ


ՀԱՅԱՍՏԱՆԻ



Qanthus
Cinnabarinus.

- Ennen vnuyste vaneachter
he, hincnante, sene vnuyste
- laufk. laufk. 13. vnu stonk
stony bunt, vnu stony
- blauk & zwart. vnu stony
blauw, blauw vnu stony.
Grauw, blauw vnu stony.
Grauw, blauw vnu stony.
vnu stony blauw vnu stony.
- blauw vnu stony - laufk. laufk.
blauw vnu stony.
blauw vnu stony - blauw vnu stony
vnu stony vnu stony.
- blauw vnu stony - laufk. laufk.
blauw vnu stony - blauw vnu stony
vnu stony vnu stony.
- blauw vnu stony - blauw vnu stony
blauw vnu stony - blauw vnu stony
vnu stony vnu stony.
- blauw vnu stony - blauw vnu stony
blauw vnu stony - blauw vnu stony
vnu stony vnu stony.

Cinnabarinus vnu stony.
blauw vnu stony.
blauw vnu stony - blauw vnu stony
blauw vnu stony - blauw vnu stony
blauw vnu stony - blauw vnu stony



ՌՈՄԱՆՍ



ի աշնանային մռայլ իրիկուն
Մի աղջիկ գնում էր անմարդ տեղերով,
Յուր անբախտ սիրո ծնունդը քայուն
Բոնած դողդոջուն, ժնիվ ձեռներով:
Բոլորը լուր էր. հոգնած աշխարքը
Հանգստանում էր գիշերվա մքնում,
Այն ինչ ուշադիր աղջիկն յուր աշքը
Երկշուր հայացքով շորս կողմն էր ածում:

Եվ, հառաշելով անմխիրարանք,
Նա ճայեց անմեղ այն արարածին.
«Քնած ես, մանուկ, դու իմ տառապանք...
Եվ անտեղյակ ես իմ սրտի վշտին...
Աշքդ բաց կանես բարձրականչ լալով,
Սակայն իմ կրծքին էլ չես կպչիլ դու.
Վաղ առավոտյան տարաբախտ քո մոր
Զերմ համբույրներին չես հանդիպելու:

Ճշալով ի զուր կը կանչես նրան.
Ավաղ, ամոք ինձ,—ես եմ մեղավոր.
Դու կը մոռանաս մորրդ հավիտյան,
Բայց պիտի հիշեմ ես քեզ ամեն օր:
Ուրիշ ծնողներ կը խնամեն քեզ,
Եվ կասեն—դու օտար ես մեզ համար.
Իմ ծնողները ո՞ւր են, կը հարցնես,
Սակայն չես գտնիլ ո՞չ հայր և ո՞չ մայր:

Թշվար երեխա, մտքով տրխրագին
Կը տանջվես օտար մանուկների մեջ,
Կը նայես նրանց մոր փաղաքշանքին
Մուայլուն հոգով մինչև կյանքիդ վերջ.
Ամեն ժամանակ բախտրդ կանիծես,
Ամեն տեղ ատված, օտար ու մենակ,
Եվ միշտ ճախատինք ու ծաղր կը լսես...
Օ՛, ների՛ր, ներիր ինձ այն ժամանակ:

Դեռ քնած ես դու... Թող քեզ, խեղն մանուկ,
Այս վերջին անգամ իմ կրծքին սեղմեմ,
Օրենքն անիրավ, խիստ ու անողոք
Մի դատավճիռ ունի մեր ընդդեմ:

Մինչև քո աճմեղ ուրախությունը
Տարիներ չեն քշել տակավին,
Քնի՛ր, սիրելի, ու բախիծները
Խորք են մանկության խաղաղ օրերին»:

Լուսինն աճտառի ճետեից հանկարծ
Երեաց, մոտիկ մի խցնիք տեսավ,
Դողալով, գունատ և սաստիկ լիված
Իրա դռանը ահա մոտեցավ,
Զգույշ կորացավ ու կամաց դրեց
Յուր երեխային օտարի շեմքում,
Խսկույն սարսափով երեսը դարձեց
Եվ անհայտացավ զիշերվա մքնում:

«ԱՏՈՒՄ ԵՄ ՔԵԶ ԵՎ, ՔՈ ԳԱՀԵ...»



տում եմ քեզ և քո զահը,
Միահեծան գոռող ցար,
Քո և քո որդոց մահը
Պիտի տեսնեմ անպատճառ:

ՅԵՒԳԻ ԵՐԳԸ

Յ

լնում է ահա հըզոր Օլեգը
Խենք խազարներից վըրեժ առնելու,
Նըրանց համարձակ հարձակման համար
Դյուղերը սրբի-հըրի մատնելու:
Եվ իր համհարզով, հազած կուռ զրահ,
Դընում է նա սեգ նըժույզի վըրա:

Մըին անտառից նրա հանդիման
Գալիս է ահա վիուկ ծերունին,
Մուր զալիքների մեկնիշն ու հըման,
Կյանքում հնազանդ միայն Պերունին,
Աղոք ու հմայքով իր դարն անցկացրած.
Եվ Օլեգ ծերին ընդառաջ գնաց:

— Ասա՛ ինձ, գուշա՛կ, ծերդ անմահների,
Կյանքիս մեջ ինձ հետ ի՞նչ է լինելու,

Եվ, ի խընդուրյուն չար ոստիների,
Շուտո՞վ եմ արդյոք շիրիմ իջնելու:
Բայց մեկնիր բոլորն, ինձնից շրժաշվես,
Վարձրդ՝ քու սիրած ձին կըտամ ես ֆեզ:

Զեն վախում դետերն երկրի մեծերից,
Եվ պետք չի նըրանց պարզեն իշխանի,
Նըրանց իմաստուն լեզուն՝ վերեկից
Ազդված՝ խոսում է կամքը երկընի,
Անհայտ են գալոց տարիքն ու մըրին,
Բայց կարդում եմ գիրդ ես քու նակատին:

Դե՛ միտքը պահիր իմ խոսքն այսօրից:
Փառքն է կյանքի մեջ խընդում ներոսին,
Հաղթուրյան փառքով նըռչակված ես դու,
Վահանդ Բյուզանդիոն բարձր դարբասին.
Հընազանդ են ֆեզ և՛ ցամաք, և՛ ծով,
Նայում է ոստիքը բախտիդ նախանձով:

Ե՛վ կապույտ ծովի նեղնեղուկ ալիք,
Ահեղ փորուրկի ժամին կատաղի,
Ե՛վ նետ, և՛ պարսետ, և՛ նենգող դաշույն,

Խընայում են միշտ կյանքը հաղողի:
Վերք չես առնիլ դու քու զբահում,
Հրզորին անտես ոգի է պահում:

Ոչ մի վրտանգից չի վախում քո ձին,
Տիրոջ կամքը միշտ հասկանում է դա.
Մերք կանգնում է հեզ նետերի տակին,
Մերք բրոշում ուզմի դաշտերի վրա.
Ե'վ ցուրտ, և' կըոփիլ ոչինչ են դրան,
Բայց... դա կըլիճի պատճառ քու մահվան:

Օլեգը խնդաց, և սակայն մըրնեց,
Մըռայլեց հանկարծ շարագույժ մըտքից,
Լուս ու մրտախոհ բամբիցը բրոնեց,
Ներքև է իջնում սիրած նրծույզից,
Ու վերջին անգամ իր հին ընկերին
Փայփայում, շոյում, փարում է վըզին:

Դե'ն, մընաս բարյավ, վաղեմի ընկեր.
Ժամանակն եկավ մեր բաժանվելու.
Հանգիստ կաց հիմա, էլ ոտքս բնավ
Քու ասպանդակի մեջ չեմ դնելու:

‘Ե՞ն, զնա՛, բայց միշտ նիշիր Օլեգին:
Է՛յ, մանկավիկնե՛ր, նեռու տարեք ձին:

— Մածկեցե՛ք սըրան բավարձի գորգով,
Սանձիցը բըռնած մարգերս տարե՛ք,
Լողացրե՛ք, պահեք ընտրած հասիկով,
Աղբյուրի վրճիտ ջրերով ջըրեցեք:
Եվ մակավիկներն իսկույն ձին տարան,
Մի ուրիշ նոր ձի մոտ բերին նըրան:

Ցընծում է խմբով անման Օլեգը
Զըվարք ձայներով լիք բաժակների.
Ճերմակ է նըրանց զլխի ալիքը,
Ինչպես վաղորդյան ձյունը լեռների...
Հիշում են նըրանք օրերն անցկացրած,
Եվ կըռիվները միասին վարած:

— Բայց իմ ընկե՛րը, գոչեց Օլեգը,
Ո՞ւր է, ինձ ասեք, սիզապանձ իմ ձին.
Առո՞ղջ է արդյոք, այնպես սրբնաց,
Այնպես կըրակու, աշխույժ տակավին...

Եվ լրսում է, որ սեպ բըլրի վըրա
Մահու սև քընով վաղ է ժնել նա:

Խոճարիեց գըլուխսն Օլեզը հըզոր,
Եվ միտք է անում,—ի՞նչ եղավ հըման.
Սըտախոս կախա՛րդ, անխե՛լք ալեռ,
Թե չէի լսել ես քու սըտուրյան,
Կարեի մինչ օրս իմ ձին ես հեծնել:
Եվ ձիու ոսկերքն ուզում է տեսնել:

Գընում է Օլեզն ահա պալատից,
Նըրա հետ իզորն և հյուրերը հին.
Տեսնում են ձիու ոսկերքը քափկած
Բըլուրի վըրա, Գընեպրի ափին:
Փոշին ծածկում է, անձրեն ողողում,
Աւ սեզը վըրեն բամին օրորում:

Ատն զզույշ դըրավ իշխանը զանգին
Ու կանչեց. Քընի՛ր, միայնակ ընկեր,
Քեզնից շատ ապրեց քու տերն ալեռ.
Թարմ շիրմիս վըրա դու չես մահաբեր

Տապարի տակին սեզը ներկելու,
Քու տամ արյունով անյունս հարգելու...

— Ահա՝ թե ուր էր օրհասը պահված,
Այս չոր ոսկո՞րն էր ինձ մահ սպառնում:
Այն ինչ՝ անկենդան գանգիցը հանկարծ
Ֆըշալով սողաց մի օձ շարարույն,
Սև բոկի ճըման փարարվեց ոտքին,
Իշխանն օձահար գոռաց ցավագին:

—————

Փրտիրուն բասերը շրջան են առնում
Օլեզի մահվան տըխուր հարգինքին,
Եզորն ու Օլգան բըլուրի վըրա,
Նըստած է խումբը Դընեպրի ափին,
Հիշում են բազերն օրերն անցկացրած
Եվ կըոիվները միասին վարած:

1822

ԶՄԵՈՎԱՆ ԻՐԻԿՈՒԽՆՅ



ողմը մեզով երկինքն առնում,
Դալարում է բուժը ձյան,
Մերը մանկան պես լաց է լինում,
Մերը ոռնում է զերք զազան.
Մերը վայրենի սուլում պես-պես,
Աղմկում է տանիքում,
Մերը՝ ուշացած նամփորդ, ասես՝
Լուսամուտն է նա քակում:

Մեր խրճիքը, աղքատ ու հին,
Ե՛վ մըրին է, և՝ տըխուր.

Ի՞նչ ես նըստել պատի տակին,
Իմ պառավըս, էղպես լու:
Հոգնե՞լ ես դու փորորիկի
Ոռնոցներից խելազար,
Թե՞նիրիում ես քո իլիկի
Բըզզոցի տակ միալար:

Արի խըմենք, բարի ընկեր
իմ սև, զամել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ քե՛ր,
Սիրտներըս բաց կըլինի:
Երգի՛ր, ո՞նց էր ապրում խաղաղ
Հավեր ծովի էն ափին,
Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ
Զուրը գնում մինչ արփին:

Հողմը մեզով երկինքն առնում,
Գալարում է բուժը ձյան,
Մին' մանկան պես լաց է լինում,
Մին' ոռնում է զերք գազան:
Արի, խմենք, բարի ընկեր
իմ սև, զամել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ քե՛ր,
Սիրտներըս բաց կըլինի:

1825

ՃՐԱՀԵՂՋԸ



Երս վազեցին մանուկները
Ու կանչում են հորն ըշտապ.

Ա՛պի, ա՛պի, ե՛կ, մեր քոռը
Մեռել հանեց գետի ափ:

Սուտ եք ասում, շա՛ն լակուաներ,
Դոռաց հայրը ահարեկ.
Ըսպասեցեք դուք հալա դեռ,
Մեռելն հետո կըտեսնեք:

– Ռիվան կրզա պատասխան տո՛ւր,
Ցավի միջում կըմնամ...

Հընար շրկա, բե՛ր, ա՛յ կընիկ,
Շորերը տուր, մի գընամ:

– Ո՞ւր է մեռելն. Ա՛յ, ա՛պի, ա՛յ:
Ճիշտ որ գետի եզերին,
Թաց քողի մոտ, գետնի վրա
Տարածված էր մի մարմին:

Զարհուրելի դիակն ուտել,
Կապըտել էր այլանդակ:
Արդյոք տանջված մի քշվա՞ռ էր
Հանգիստ զըտած ջրի տակ,
Մի գետակուր ձըկնո՞րս էր այն,
Թե՞ գինեմոլ մի ջահել,
Թե՞ անըզգույշ վանառական
Հարամու էր պատահել...

Ընչի՞ն է պետք: Աշք ածելով
Ըշտապում է գյուղացին,
Ռտից բրոնած, ևս ժարշ տալով.
Զուրն է տանում խեղդվածին:
Ու թիակով գետի եզրից
Զուրը հըրեց նա նըրան,
Ու դիակը զընաց՝ նորից
Փընտրի խաչ ու գերեզման:

Մեռելն երկար ջըրի միջին
Ցած էր իջնում նոնելով,
Աշքով նամփեց մեր գյուղացին
Ու տուն դարձավ կանչելով.

— Դեսը կորե՞մ, ա'յ լակոտներ,
Եկե՞մ, քան տամ ձեզ — տանեմ,
Ամա թէ որ ձեն եք հանել,
Հոգիները կը հանեմ:

Գիշերն ուժգին քոյք վերկացավ,
Գետն ելնում է, որոտում...

Մարխը արդեն էրվեց, հանգավ
Լուն ու ծրիոտ խրբնիքում.

Ողջ ֆրնած են: Աճեռուն պառկած
Միտք է անում զյուղացին...

Բույն ոռնում է —... մին էլ հանկարծ
Լուսամուտը բախեցին...

— Ո՞վ ես: Ներս քո՞ղ, ա'յ տանտեր, նե՞րս...
— Ա'յ, ներս ու ֆեզ չո՛ռ ու ցավ,
Ի՞նչ ես շրբզում կայենի պես,
Ո՞ր սատանեն ֆեզ քերավ:
Ի՞նչ անեմ ֆեզ, ասա', հիմի,
Տեղը նեղ է, տունը մուր:
Ու ծույլ ձեռքով, տրտրենջալով՝
Բաց է անում լուսամուտ:



Յոլում է լույսն ամսի տակից.
Ահա կանգնած... մի մերկ մարդ,
Զուր է հոսում նըրա միրֆից,
Բաց են աշտերն ու անքարք:
Կախ են ընկած բազուկները,
Ռդջ կարկամած սոսկալի,
Ուտած մարմնին ժառչանգները
Կրպած՝ սեին են տալիս...

Ահից մարեց՝ ճանաշելով
Եր մերկ հյուրին նա հանկարծ.
Փեղկը խփեց ու դողալով՝
— Ա՛յ դու ճամե՛ս, — բըրբմնջաց:
Ամբոխվեցին մըտքերը մուր.
Մինչև լույսը նա դողում,
Մինչև լույսը լուսամուտը
Բախում էին ու բախում...

Ամբոխն ահեղ զըրույց ունի,
Թե այս դեպքից գյուղացին
Ըսպասում է ամեն տարի

Միշտ նույն օրը խեղդվածին:
Խառնվում է օրն առավոտից,
Գիշեր գալի բուժ ու մուր,
Ու խեղդվածը ամբողջ գիշեր
Բախում դուռն ու լուսամուտ:

1828

ՎԻՍՈՆԻ «ԺԱՆՏԱԽՏԻ ՔԱՂԱՔԸ»
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ



ար ժամանակ, որ ծաղկում էր
Մեր աշխարհիք անխըռով,
Աստծո տանարն որոշում էր,
Թընդում էր տոն օրերով:
Աղմկալի մեր դպրոցում
Երգում մանկունք մեր մատադ,
Շողում էին լիքը հանդում
Սուր գերանդին ու մանգադ:

Այժմ բախուր եկեղեցին,
Դպրոցը փակ, խըլացած,
Արտը կըծղած հանդի միջին,
Թավ պուրակը դատարկված,
Ու զյուղն էրկած մի տաճ նըման
Կանգնած ավեր, ամայի,
Ո՞ղջ պապանձված. լուռ չի միայն
Դամբարանը ահոելի:

Մեռե՞լ, մեռե՞լ ամեն վայրկյան
Ու ապրողներն աստծուն
Աղոքում են միաբերան
Նըրանց հոգուն փրկություն:
Մեռե՞լ, մեռե՞լ ամեն վայրկյան,
Ու շիրիմներն իրար քով
Սարսափահար հոտի նման
Սեղմըվում են խիտ շարքով:

Գարուն կյանքիս երե նույնպես
Վիճակված է վաղ շիրիմ,
Ով դո՞ւ, ում որ սիրել եմ ես,
Հոգուս անզույզ մըտերիմ,
Չըմոռանաս իմ շրունքին
Քո համբույրով կենսածիր,
Չըմոռանաս իմ դիակին,
Հեռվից հեռու հետեւիր...

Ապա ձրգիր դու մեր գյուղը,
Փախիր այլուր, նեռացիր,
Հոգուդ տանջանքն ու երկյաղը
Վանիր էնտեղ ու կացիր:

Ու երբ կանցնեն իս օրերը,
Այց եկ շիրմիս գեր մի հեղ,
Իսկ ես ոչ քեզ, ոչ քո սերը
Չեմ մոռանալ և էնտեղ...

1830

ԵԹԵ ԻՐԱՎ. Է



Եթե իրավ է, որ զիշերները,
Երբոր հանգչում են մարդիկ ներքեռում,
Երկրներից իջնում լուսնի շողերը,
Գերեզմանների վրա դողդողում:

Եթե իրավ է, որ այն ժամերին
Դատարկվում են լուս գերեզմանները,
Օ՛, ես կըկանչեմ իմ սիրելիին,
Կըկանչեմ նրա նըսեմ ըստվերը:

— Արի՛, հայտնվի՛ր, սիրելի՛ պատկեր,
Ինչպես և էիր անջատման ժամին,
Սառն ու դալկաղեմ, ինչպես ձմռան օր,
Խանգարած, խեղած տանջանքով վերջին:

— ԱՌի, արի՝, ինչպես աստղիկ հեռավոր,
ինչպես բույլ հընջուն քերև զեփյոտի,
Կամ քեկուզ ինչպես տեսիլ ահավոր,
Ինձ համար մին է... արի՝, միայն արի...

1830

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հջ

1. Ռոմանս «Մի աշնանալին մոայլ իրիկուն» (1814)	3
2. «Ատում եմ քեզ և քո գահը» (1817)	6
3. Օլեգի երդը (1822)	7
4. Զմեռվա իրիկունը (1825)	13
5. Զբահեղձը (1828)	15
6. Վիլսոնի «Ժանտախտի քաղաքը» ողբերգությունից (Մերիի երդը) (1830)	20
7. «Եթե իլավ է, որ դիշելոները...» (1830)	23


Շալիկը, Փորգացը, նեղինակի պատրեն և
զլխատառերը՝ Ակարիչ Հ. ՌՈՒԽԿՅԱՆԻ

Խմբադիր՝ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Տեխ. խմբադիր՝ Ա. ԼԱԲՈՅՆԻ
Կոնտրոլ սըրադրէչ՝ Վ. ԴԱՐԵՍՅԱՆ

վ.թ. 01881. Պատվեր 177. Տիրաժ 5000. Տպադ. 0,75 մ.

Հայոլուիդրաֆհրատի Վարչության № 3 առարան,
Ալավերդյան 65, Երևան—1949թ.:







ԳԱԱ Հիմնարար գիւղ. Գրադ.



FL0037805

ԳԻՒԸ ՅԱ.

